ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA
ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Հրապարակման ենթակա չէ

Պայմանագիր

Թիվ 18-06.3/011417-2

ք. Երևան «01» 11 2017թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ ի դեմս Գլխավոր քարտուղար Դավիթ Նահապետյանի, ով գործում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 15.12.2015թ. տրված 2/309 կարգադրության հիման վրա (այսուհետ՝ Բանկ), և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ ի դեմս Աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Սահակյանի, մյուս կողմից (այսուհետ՝ «Կոմիտե»), հետագայում միասին «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կոմիտեն պարտավորվում է կատարել ք. Երևան, Դեղատան փողոց 3 հասցեում գտնվող շենքի ջեռուցման գումարի փոխհատուցում (այսուհետ՝ Փոխհատուցում) Բանկին՝ ըստ ամիսների և փաստացի ջեռուցված օրերի քանակի:

2. Պայմանագրի ժամկետը

2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.2.Պայմանագրով նախատեսված ջեռուցման համար նախատեսված Փոխհատուցումը Կոմիտեն Բանկին իրականացնում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 1 (մեկ) տարվա ընթացքում:

2.3.Կոմիտեի կողմից վճարումն իրականացվում է ընդունման-հանձնման ակտի ստորագրումից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4. Սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին և յուրաքանչյուր դեպքում, Կողմերի կողմից Պայմանագրի դադարեցման մասին որևէ ծանուցում չներկայացնելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված հերթական մեկ տարով:

3. Պայմանագրի արժեքը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված ջեռուցման համար Փոխհատուցման մեկ օրվա գումարը կազմում է 6 (վեց) ՀՀ դրամ՝ 1 (մեկ) քառակուսի մետրի համար: Ընդ որում ջեռուցվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2628 (երկու հազար վեց հարյուր քսանութ) քառակուսի մետր:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված սակագնին և քառակուսի մետրին համարժեք յուրաքանչյուր ամսվա վճարումն իրականացվում է ջեռուցված օրերին համապատասխան՝ ընդունման հանձնման ակտի հիման վրա:

Հրապարակման ենթակա չէ

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1. Կոմիտեն պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով և սակագներով Բանկին փոխհատուցել Պայմանագրի 3.1. կետում նշված գումարը:
4.2. Սույն Պայմանագրով Կողմերն իրավունք ունեն պահանջելու կատարելու սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կոմիտեի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում վճարում է տույժ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, սույն պայմանագրի 3.1. կետում նշված ընդհանուր գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
5.2. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե պայմանագրի խախտումը պայմանագրի մյուս կողմի պարտավորությունների անպատշաճ կատարման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք էր:
5.3.Կողմերը սույն պայմանագրով նախատեսված տույժերը վճարելով և վնասները հատուցելով չեն ազատվում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները լրիվ ծավալով կատարելուց:

6. Այլ պայմաններ

6.1. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել, լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:
6.2. Սույն պայմանագրի կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.3. Սույն պայմանագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր Կողմին տրվում է սույն պայմանագրի մեկ օրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեները

«Բանկ»	«Կոմիտե»
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Վ. Սարգսյան 6	ք. Երևան, Խորենացի 3/7
ՀՎՀՀ 02522053	ՀՎՀՀ 02647057
h/h 103004614006	h/h 900013574018
Գլխավոր քարտուղար՝	Աշխատակազմի ղեկավար՝
Դավիթ Նահապետյան	Արտակ Սահակյան